



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 418 - Ա

24 հոկտեմբերի 2019 թ.

**ԱՆՆԱ ՆԱՆԱՆՅԱՆԻՆ  
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 158-րդ, 163-րդ, 164-րդ հոդվածների, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Աննա Նանանյանի դիմումը կարգադրում եմ՝


1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աննա Նանանյանին տրամադրել 2019 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի չօգտագործած մասը՝ 2019 թվականի հոկտեմբերի 28-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ /4 աշխատանքային օր:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները 2019 թվականի հոկտեմբերի 28-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ դնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտանեկան բժիշկ Մինաս Սարգսի վրա:

3. Աշխատանքի մեջ համարել 2019 թվականի նոյեմբերի 1-ից:

24.10.2019

X



ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL #710830069

**Գ.ՍԱՆՈՍՅԱՆ**  
ք. Գավառ

V